



COVID-19 համավարակը և պարենի մատակարարման շղթաներին սպառնացող վտանգները հնչալես արձագանքել

Մաքսիմո Տորերո Զալեն¹

Գլխավոր տնտեսագետ,
գլխավոր տնօրենի օգնական
Տնտեսական և սոցիալական
գարգացման դեպարտամենտ

Միավորված ազգերի կազմակերպության՝ Պարենի և գյուղատնտեսության
կազմակերպություն (ՊԳԿ)

ԻՆՉ Ե ՊԵՏՔ ԻՄԱՆԱԼ

Պետությունները խստորեն սահմանափակել են տնտեսական գործունեությունը՝ կորոնավիրուսի տարածումը դանդաղեցնելու նպատակով: Խոշոր խանութներում ապրանքների դարակաշարերը դեռևս լեփ-լեցուն են: Սակայն համավարակով պայմանավորված ճգնաժամի երկարաձգումը կարող է արագորեն սահմանափակել պարենային ապրանքների մատակարարման շղթաները. շփումների բարդ ոստայն, որի մեջ ներգրավված են ֆերմերներ, գյուղատնտեսական ներդրանք, վերամշակման գործարաններ, բեռնափոխադրումներ, մանրածախ վաճառողներ և այլն: Բեռնափոխադրման արդյունաբերությունն արդեն իսկ նավահանգիստների փակման հետ կապված հապաղումներ է արձանագրում, իսկ նյութատեխնիկական ապահովման խոչընդոտումներն առաջիկա շաբաթներին կարող են մատակարարման շղթաները խափանել:

Պարենային ապրանքների պակասությունից խուսափելու համար չափազանց կարևոր է, որ պետությունները ճիգեր գործադրեն պարենի մատակարարման շղթաների անխափան աշխատանքն ապահովելու ուղղությամբ: Ի տարբերություն 2007-2008 թթ. համաշխարհային ճգնաժամի, այս անգամ խնդիրը պարենի սակավությունը չէ: Առաջին անհրաժեշտության ապրանքների մատակարարումը լավ է իրականացվում և բերքը պետք է տեղափոխվի այնտեղ, որտեղ ամենից շատն է դրա կարիքը զգացվում: Առևտրի սահմանափակումը ոչ միայն անհրաժեշտ չէ, այլև այն կարող է վնաս հասցնել արտադրողներին ու սպառողներին և, նույնիսկ, շուկաները խուճապի մատնել: Բարձր արժեք ունեցող ապրանքների դեպքում, որոնց արտադրության համար մարդկային (այլ ոչ թե՛ մեքենա) աշխատուժ է պահանջվում, պետությունները պետք է փորձեն հավասարակշռություն ստեղծել արտադրության անխափան ընթացքի ապահովման և աշխատողներին պաշտպանելու անհրաժեշտության միջև:

Կորոնավիրուսի համավարակի դեմ պայքարում երկրները պետք է միաժամանակ անեն հնարավորը՝ պարենային ապրանքների մատակարարման շղթաների սահուն աշխատանքն ապահովելու համար:

Առաջին. գլխավոր առաջնահերթությունն առողջությունն է: Պետությունները պետք է հնարավորինս շատ թեստավորում և մեկուսացման միջոցառումներ իրականացնեն, ինչը կօգնի դանդաղեցնել հիվանդության տարածման տեմպը: Երկրորդ. պետությունները պետք է տնտեսության վրա համավարակի ազդեցության չեզոքացման միջոցառումների օգնությամբ լուծեն ամենախոցելի խմբերի կարիքները:

Երրորդ. պետությունները պետք է պահպանեն պարենային ապրանքների անընդհատ մատակարարումը՝ առաջնահերթությունը տալով ոլորտի աշխատողների առողջությանը և նրանց աշխատանքի արդյունքին: Ստորև ներկայացվում են կոնկրետ առաջարկություններ:

1. Ընդլայնել և բարելավել արտակարգ դրության պայմաններում պարենային օգնության և սոցիալական աջակցության ծրագրերը

Այս միջոցառումների միջոցով փորձ է արվում օգնել խոցելի անձանց՝ պահպանելու տանը մնալու պահանջը՝ հաշվի առնելով, որ գոյատևելու համար նրանց ամենօրյա եկամուտ է անհրաժեշտ: Չանգվածային կրճատումների պայմաններում ընտանիքները

¹ Լավագույն գործելակերպերի վերաբերյալ առավել առավել մանրամասն կարդալ այստեղ՝ <http://www.fao.org/2019-ncov/analysis/en/>։ Հեղինակը շնորհակալություն է հայտնում Միավորված ազգերի կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության՝ Տնտեսական և սոցիալական զարգացման վարչության աշխատակիցներին, ինչպես նաև՝ Հռոմում գործող գործակալությունների բոլոր գործընկերներին՝ լավագույն փորձի բացահայտման հարցում ցուցաբերած աջակցության համար:

մեծ ջանքեր են գործադրում օրվա կերակուրն ապահովելու ուղղությամբ: Ավելի քան 160 երկրներում [համատարած փակվել են դպրոցները](#), ինչն անդրադարձել է սովորողների ավելի քան 87 տոկոսի վրա: Դա նշանակում է, որ դադարեցվել է դպրոցական սննդի տրամադրումը, ինչը, հաճախ, խոցելի ընտանիքներում ապրող երեխաների սնուցման միակ աղբյուրն է: Եկամտից զրկվել են նաև դպրոցական սնունդ մատակարարողները և կազմակերպողները:

Արտակարգ իրավիճակում օգնությունը պետք է հնարավորինս վաղ փոխվում տրամադրվի՝ վիրուսի տարածումը զսպելու և վերականգնման հետագա փուլում կենսամիջոցների ապահովման նպատակով: Պարենային «բանկերը» և համայնքային խմբերը, որոնց աջակցում են թե՛ կառավարությունը, թե՛ մասնավոր բարեգործական կազմակերպությունները, պետք է ներգրավվեն սննդամթերքի առաքման գործում, քանի որ ընտանիքները տանն են մնում: Այլ բնափրային օգնությունը, օրինակ՝ պաշտպանիչ հանդերձանքը/պարագաները տարեցների կամ քրոնիկ հիվանդություն ունեցողներին տրամադրելու համար կարելի է նաև առաքման մեխանիզմներից օգտվել: Երկրները պետք է երկարաժամկետ ներդրումներ կատարեն պարենային ապրանքների մատակարարման շղթաներում հիվանդության բռնկման դեպքում արտակարգ իրավիճակներին պատրաստվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ, որը կօգնի չեզոքացնել ոչ միայն վարակիչ հիվանդության ուղղակի սպառնալիքը, այլև վատ սնուցման հետևանքով առողջությանը սպառնացող վտանգը:

Խոցելի ընտանիքներին վաղ փոխվում տրամադրվող միանվագ կամ բազմակի դրամական օգնությունը կարող է իրական ճգնաժամի ազդեցության ուժգնությունը մեղմել: Դրամական օժանդակությունը կարող է նեցուկ դառնալ ընտանիքներին այնքան ժամանակ, քանի դեռ չեն բարելավվել հանգամանքները, հատկապես սոցիալական ծառայությունների խաթարումների ժամանակ: Վճարման շարժական համակարգերը լավագույն լուծում են արագ առաքում կազմակերպելու և կանխիկ դրամի փոխանակման արդյունքում մարդկանց շփումը նվազագույնի հասցնելու առումով: Խոցելի ընտանիքների համար անհրաժեշտ է նաև հարկային և վարկային վճարումների ժամկետները երկարաձգել: Սոցիալական պաշտպանության ծրագրերը պետք է ընդլայնվեն՝ նախկինում աջակցությունից չօգտվողներին ներառելու համար, որոնք ներկայում չափազանց խոցելի դիրքում են, ներառյալ՝ տարեց բնակիչները: Կորցրած եկամտի փոխհատուցման համար նախատեսված փոխրացնող միջոցառումները դրա լավագույն օրինակն են: Աջակցության ծրագրերի բոլոր նախապայմանները պետք է ժամանակավորապես վերացվեն:

2020 թվականի մարտի 20-ի դրությամբ աշխարհի շուրջ 45 երկիր համավարակի դեպ պայքարի շրջանակում ներդրել կամ ընդլայնել է անվտանգության և ապահովության ծրագրերը: Օրինակներ.

- Իտալիան օժանդակում է կրճատված աշխատողներին՝ հետաձգելով նրանց անձնական և բիզնեսի վարկային վճարումների ժամկետները, չեղարկում պարտքերը՝ որպես [25 միլիարդ եվրոյի չափով «Heal Italy \(Բուժիր Իտալիային\)» օգնության փաթեթի մաս](#): Ծրագիրը ներառում է 12 տարեկանից ցածր երեխա ունեցող ընտանիքներին միանվագ 600 եվրո գումարի վճարում:
- Ամերիկայի Միացյալ Նահանգները [2 տրիլիոն ԱՄՆ դոլարի չափով տնտեսական խթանների ծրագիր](#) է առաջարկել: Այն ներառում է 1200 ԱՄՆ դոլարի չափով միանվագ գումարի վճարում չափահասներին և յուրաքանչյուր երեխայի համար տրվող հավելյալ 500 ԱՄՆ դոլար, ինչպես նաև գործազրկության ընդլայնված ծրագիր: Այս փաթեթը հաջորդեց 100 միլիարդ ԱՄՆ դոլարի օգնության ծրագրին, որը նախատեսված էր աշխատողների հարկադիր արձակուրդի վճարման համար:
- Ֆրանսիան [աջակցում է ծնողներին](#)՝ մնալու տանը և խնամելու երեխաներին, իսկ ինքնամեկուսացած անձանց անաշխատունակության նպաստ է առաջարկում:
- Չինաստանը, Յունգ-Կոնգը, ՅԱՀ-ը և Սինգապուրը [համատարած միանվագ գումարներ](#) են վճարում իրենց բոլոր քաղաքացիներին:

- Պորտուգալիան ամսական 1097 եվրո է վճարում [ինքնազբաղված անձանց](#)՝ 12 ամիս ժամկետով:
- Չինաստանն արագացրել է գործազրկության նպաստների վճարումը, ընդլայնել սոցիալական աջակցության ծրագրերը՝ օգնելու աղքատության ճիհրաններում հայտնված ընտանիքներին, [միաժամանակ դադարելով սոցիալական ապահովության վճարներ գանձել](#) բիզնեսներից:
- Պերուն 3 միլիոն խոցելի ընտանիքների [պաշտպանության համակարգ է ներդրել](#) և խրախուսում է տարեց քաղաքացիների [կենսաթոշակների վճարումը](#)՝ առավել ընդլայնելով գործող ծրագրերը, ինչպիսին է [«Pensión 65»-ը](#): Այն խոցելի ընտանիքներին տրամադրում է նաև հավելյալ օգնություն՝ ի լրումն համազգային մակարդակով տրամադրվող դրամական օժանդակության:

2. Օժանդակել փոքր գյուղացիական տնտեսություններին՝ արտադրողականության բարձրացման և արտադրած սննդամթերքը շուկայում, այդ թվում՝ էլեկտրոնային առևտրի միջոցով, ներկայացնելու նպատակով

Տեղաշարժի սահմանափակումներն արգելափակում են գյուղացիական տնտեսությունների մուտքը շուկա՝ ներդրանք գնելու և արտադրանքը վաճառելու նպատակով: Ֆերմաներում թարմ մթերք է կուտակվում, ինչը [սննդամթերքի կորստի](#) պատճառ է դառնում: Այդ սահմանափակումների արդյունքում աշխատուժի պակաս է առաջանում, քանի որ սեզոնային միգրանտ աշխատավորները չեն կարողանում տեղից տեղ գնալ: Նույն այդ պատճառով 2014 թվականին Էբոլայի բռնկումն Արևմտյան Աֆրիկայում գյուղատնտեսական շուկաները փլուզեց, ինչը սննդամթերքի պակասի և գների աճի հանգեցրեց: Աֆրիկյան հիմա հատկապես խոցելի է՝ անապատային մորեխի տարածման պատճառով, որն արդեն իսկ սպառնում է մայրցամաքի պարենային ապրանքների մատակարարմանը: Չինաստանում նյութատեխնիկական ապահովման սահմանափակումները և աշխատուժի պակասը հանգեցրել են թարմ բանջարեղենի խոտանմանը, կենդանական կերի սահմանափակ հասանելիության և սպանդանոցների կարողությունների շեշտակի անկմանը:

Պետությունները պետք է հետևյալ առանցքային կարևորության միջոցառումներն իրականացնեն: Առաջին. հավաքագրման կենտրոնները պետք է մոտեցվեն փոքր արտադրողներին՝ տեղաշարժի անհրաժեշտության նվազեցման նպատակով: Հավաքագրման կենտրոնները պետք է մեծ հնարավորություններ ունենան: Մեծ դեր կարող են ունենալ պարենային «բանկերը»՝ հիմնվելով նրանց գիտելիքի, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով ներգրավված ֆերմերային ասոցիացիաների հետ միասին հորիզոնական և ուղղահայաց համակարգման մեխանիզմների վրա: Երկրորդ. հնարավորության դեպքում երկրները պետք է պահեստի անդորրագրի (ստացական) համակարգ ձևավորեն, որի միջոցով [ֆերմերները կարող են անդորրագրի դիմաց իրենց վճարները ստանալ](#): Երրորդ. պետությունները պետք է արագացնեն [էլեկտրոնային առևտրի համակարգի զարգացման](#) աշխատանքները՝ փոքր ձեռնարկատերերի համար: Չորրորդ. փոքր գյուղացիական տնտեսությունների համար պետք է ապահովվի ֆինանսական միջոցների հասանելիությունը, որպեսզի նրանք շարունակեն արտադրությունը:

Մի շարք երկրներ սկսում են տնտեսական աջակցության փաթեթներ ներդրել, որոնք փոքր գյուղացիական տնտեսություններին հստակ խթաններ չեն առաջարկում: Ֆերմերներին անհրաժեշտ են կանխիկ դրամական միջոցներ և սոցիալական ապահովության ցանցի ծրագրեր, որոնք կօգնել մեծացնել իրենց արտադրողականությունը: Բանկերը պետք է վերացնեն ֆերմերների վարկային վճարումները և երկարաձգեն վճարման ժամկետները: Գյուղատնտեսության ոլորտում կապիտալի ներարկումը կարող է գյուղատնտեսության ոլորտի փոքր և միջին տնտեսավարողներին գործունեությունը շարունակելու հնարավորություն տալ: Պահեստավորման պայմանների բարելավումը կարող է նպաստել մատակարարման շղթայի ներսում բերքահավաքի հաջորդ փուլում մթերքի կորստի նվազեցմանը: Անհրաժեշտ է վերացնել ներքին առևտրին առնչվող ցանկացած սահմանափակում, ներառյալ՝ բյուրոկրատական խոչընդոտները, որպեսզի փոքր գյուղացիական տնտեսությունների և շուկաների միջև կապեր ձևավորվեն:

Կառավարությունները պետք է բավարարեն փոքր գյուղացիական և գյուղական տնային տնտեսությունների հիմնական էներգետիկ կարիքները: Գյուղական բնակավայրերում ապրող բազմաթիվ երեխաների համար դպրոցների փակումը նշանակում է, որ նրանք զրկված են առողջ սնուցման հնարավորությունից: Իսկ արտադրողների դեպքում այս ամենը եկամտի կորուստ է նշանակում: Տեղական կառավարման մարմինները պետք է դպրոցական սննդի տրամադրման այլընտրանքային տարբերակներ քննարկեն, ինչպիսին է՝ սննդի տուն առաքումը, ինչի շնորհիվ արտադրողներն աշխատանք կունենան, իսկ երեխաները՝ սննդարար ուտելիք: Արտակարգ իրավիճակներում կառավարությունները կարող են փոքր

գյուղացիական տնտեսությունների համար գյուղատնտեսական ապրանքներ գնել՝ ռազմավարական պաշարների, հատկապես պիտանիության երկար ժամկետով ապրանքների ձևավորման նպատակով, ինչը կիսթանի պարենային ապրանքների մատակարարումը: Դա կարող է օգտագործվել սոցիալական ապահովության ցանցերի ծրագրերի և դպրոցական սննդի տրամադրման համար՝ նույնիսկ փակ դպրոցների պարագայում:

Երկրները պետք է ֆերմայում աշխատողների անվտանգությունն ապահովելու միջոցներ ձեռնարկեն: Տեղում աշխատող բուժաշխատողները կարող են հոգ տանել, որ աշխատողները հիվանդ չլինեն: Հնարավորության դեպքում աշխատողները պետք է կորոնավիրուսի թեստ անցնեն: Տնային թեստերի հասանելիության դեպքում դա ավելի կհեշտանա:

Կառավարությունները պետք է ոյուրացնեն միգրանտ աշխատողների մուտքի արտոնագրերի հարցը, ինչը, որքան էլ պարադոքսալ հնչի, կարող է ֆերմաներում և գործարաններում աշխատուժի ինդիքը լուծել: Այգեգործները և պահեստները պետք է արգելեն այցելուների մուտքը: Խանութները պետք է կրճատեն աշխատանքային ժամերը, աշխատողների հերթափոխ սահմանեն և կրկնապատկեն իրենց առաքման ծառայությունները: Պահեստները և վերամշակման կայանները պետք է վերանախագծվեն, որպեսզի աշխատողները սոցիալական հեռավորություն պահպանելու հնարավորություն ունենան: Բուժաշխատողները պետք է ստուգեն աշխատողների ջերմությունը և ապահովեն նրանց կողմից դիմակներ, ձեռնոցներ և այլ հանդերձանք կրելը:

² Ալիբաբա Խումբը, JD.com, Meituan-Dianping և այլ ընկերություններ լիովին փոխել են չինացի սպառողների գնումների կատարման վարքագիծը՝ տեղափոխելով այն առցանց հարթություն, հաճախ «super app-ի (սուպերհավելված)» միջոցով: 2019 թվականի դրությամբ Չինաստանի էլեկտրոնային առևտրի ծավալը մանրածախ առևտրի 36.6 տոկոսն էր կազմում, որից 71 տոկոսը չինացի սպառողները կատարում էին առցանց գործարքներով և հիմնականում «խելացի» հեռախոսներում ներբեռնված հավելվածների միջոցով: Էլեկտրոնային առևտրի գործարքների 80 տոկոսը կատարվում է «խելացի» հեռախոսների հավելվածների միջոցով:

Աղքատ երկրները կարող են փորձել միջազգային ֆինանսավորում ստանալ՝ փոքր գյուղացիական տնտեսություններին օժանդակելու նպատակով: Կան այնպիսի ֆինանսավորման մեխանիզմներ, ինչպիսին է [Գյուղատնտեսական և պարենային անվտանգության համաշխարհային ծրագիրը](#), որը հիմնադրվել է 2007-2008 թթ. պարենային ճգնաժամի ժամանակ՝ նույն այդ նպատակով:

Միանգամայն տեղին է անդրադառնալ Իտալիայում և Չինաստանում փոքր գյուղացիական տնտեսությունների և նրանց գյուղատնտեսական արտադրության պաշտպանության համար ձեռնարկվող միջոցառումներին:

Չինաստան

- Սահմանները փակելիս Չինաստանը «բանջարեղենի զամբյուղ» քաղաքականությունն սահմանեց, որպեսզի նվազեցնի վիրուսի ազդեցությունը փոքր տնտեսությունների վրա և հնարավորինս մեղմի պարենի պակասը:
1980-ականների վերջին ծրագիրը [քաղաքաբնակների համար մեծազուց թարմ սննդամթերքի հասանելիությունը](#)՝ քաղաքի արվարձաններում բանջարանոցների ընդլայնմամբ և արգելոցների ձևավորմամբ: Այսպիսով, ինը նահանգների ֆերմերները և առևտրականները համատեղ աշխատում էին՝ Զուբեյ նահանգին, որը վիրուսի բնկման էպիկենտրոնն էր, ձավարեղենով, ձեթով, մսով, բանջարեղենով, կաթնամթերքով, ձվով և ակվակուլտուրայի մթերքով ապահովելու համար:
- Տեղական ինքնակառավարման որոշ մարմիններ միասնական են դարձրել գնումները, կենտրոնացրել կենդանիների սպանող և շրջանային կոոպերատիվների սառնարանային պահեստավորման շղթան, ինչպես նաև ամբողջությամբ սուբսիդավորել պահեստավորման ծախսերը:
- [Էլեկտրոնային առևտրի հարթակները](#) ոյուրացնում են կուտակված ապրանքների վաճառքը՝ խթանելով վերջինիս ծավալները: Օրինակ՝ «Ալիբաբա» Էլեկտրոնային առևտրի չինական ընկերությունը հատուկ հիմնադրամ է ստեղծել՝ օգնելու գյուղացիական տնտեսություններին գտնել չվաճառված գյուղմթերքի շուկաներ, ինչպես նաև կառուցում է «կանաչ ուղի»՝ թարմ գյուղատնտեսական մթերքի համար:
- Գյուղատնտեսությունը վերականգնելու համար Պեկինի կենտրոնական կառավարությունը սուբսիդիաների ձևով 20 միլիոն ԱՄՆ դոլար է տրամադրել սարքավորումների և գործիքների գնումների համար: Այն ընկերություններին ցածր տոկոսադրույքով վարկեր է տրամադրում, նվազեցնում վարձավճարները՝ զարգացնելու բարձր տեխնոլոգիաները գյուղատնտեսության ոլորտում, ինչպիսիք են՝ գյուղատնտեսական անօդաչու թռչող սարքերը և անօդաչու փոխադրամիջոցները՝ մարդկային շփումը հնարավորինս նվազեցնելու և, միևնույն ժամանակ, պահպանելու մատակարարման շղթաների անխափան ընթացքը:

Իտալիա

«Heal Italy»-ն [գյուղատնտեսության ոլորտի աջակցության մի շարք միջոցառումներ](#) է նախատեսել, որոնք համալրում են գործող ազգային քաղաքականությունները՝ ապահովելու գյուղատնտեսական ծառայությունների հասանելիությունը, այդ թվում՝ սերմերի և պարարտանյութերի մատակարարումը:

Ծրագրի շրջանակում 100 միլիոն եվրո է հատկացվել աշխատանքները կասեցրած գյուղատնտեսական կամ ձկնորսական ընկերություններին, ինչպես նաև հավելյալ 100 միլիոն եվրո՝ նրանց ֆինանսավորելու նպատակով: Այն ֆերմերներին Եվրոպական միության՝ ֆերմերների համար նախատեսված սուբսիդիաներից կանխավճարներ ստանալու հնարավորություն է տալիս: Ծրագիրը 50 միլիոն եվրոյով խթանում է ԵՄ բյուջեն՝ աղքատներին սնունդ բաժանելու համար: Ծրագիրը նախատեսում է նաև 600 եվրոյի օժանդակություն՝ կարճաժամկետ

պայմանագրեր ունեցող գյուղատնտեսության ոլորտի աշխատողներին:

3. Պահպանել պարենային արժեշղթաների կենսագործունեությունը՝ կենտրոնանալով հիմնական լոգիստիկ խոչընդոտների վրա

Պարենային արժեշղթաները կարելի է բաժանել երկու խմբի՝ առաջին անհրաժեշտության ապրանքներ (ցորեն, եգիպտացորեն, հացահատիկ, սոյա և ձիթատու սերմեր) և բարձրարժեք ապրանքներ (մրգեր, բանջարեղեն և ձկնամթերք): Առաջնային անհրաժեշտության ապրանքների արտադրությունը կապիտալի առումով ծախսատար է, և կորոնավիրուսի հետևանքով տեղաշարժի սահմանափակումներով պայմանավորված աշխատուժի պակասը քիչ է ազդում այդ ապրանքների արտադրության վրա: Սակայն դա ազդում է այդ ապրանքների բաշխման լոգիստիկայի վրա, քանի որ խոչընդոտում է քաղաքներում, նահանգներում, շրջաններում և երկրներում պարենային ապրանքների փոխադրումներին:

Ինչ վերաբերում է բարձրարժեք ապրանքներին, ապա դրանց արտադրության համար մեծ աշխատուժ է պահանջվում: Ուստի վերջինս մեծապես տուժում է աշխատողների հիվանդանալու, կամ տեղացի և միգրանտ աշխատողների՝ տեղաշարժի սահմանափակման պատճառով բացակայելու հետևանքով: Պարենային ապրանքների մատակարարման շղթաները խափանող լոգիստիկ


խոչընդոտներն առավելապես ազդում են բարձրարժեք ապրանքների վրա, քանի որ պիտանիության կարճ ժամկետ ունեն: Մատակարարման բարձրարժեք արժեշղթաները ներառում են սննդամթերքի վերամշակման գործարանները, քանի որ դրանք մեծ աշխատուժ են պահանջում: Ներկայում տեսակավորման և փաթեթավորման ոլորտները չեն համապատասխանում սոցիալական հեռավորության պահանջներին:

Կան առաջնային անհրաժեշտության ապրանքների բավարար պաշարներ (տես՝ գծապատկեր 1-ը): 2020 թվականի բերքահավաքի հեռանկարները բարենպաստ են, ինչը սննդամթերքի հասանելիություն կապահովի: Այնուամենայնիվ, արդեն սկսել են մատակարարման շղթաների նյութատեխնիկական ապահովման խաթարումներ ի հայտ գալ: Օրինակ՝ [Արգենտինայի կենտրոնում գտնվող Ռոսարիո քաղաքը](#) երկրի հացահատիկի արտահանման խոշորագույն կետերից է, ինչպես նաև սոյայի արտադրության հիմնական տարածքներից մեկը: Արգենտինան սոյայի հիմքով կենդանական կերի աշխարհի ամենախոշոր արտահանողներից է: Վերջին շրջանում Ռոսարիոյի մերձակայքում գտնվող տասնյակ քաղաքային իշխանություններ արգելել են իրենց քաղաքներ հացահատիկ տեղափոխող բեռնատարների մուտքը և ելքը՝ վիրուսի տարածումը դանդաղեցնելու նպատակով: Շատերը չեն հնազանդվում ճանապարհների արգելափակման վերացման վերաբերյալ դաշնային կառավարության պահանջին՝ բարձրաձայնելով առողջապահական մտահոգությունները: Յետևաբար, սոյայի հատիկները մանրացնող գործարաններ չեն հասցվում, ինչն անդրադառնում է սոյայի հիմքով կենդանական կերի արտահանման վրա: Բրազիլիայում, ևս, որն առաջին անհրաժեշտության ապրանքների հիմնական արտահանող երկրներից է, արդեն իսկ առկա են լոգիստիկ խոչընդոտներ՝ վտանգելով պարենային ապրանքների մատակարարման շղթաները: Միջազգային առումով՝ եթե փակվեն այնպիսի խոշոր նավահանգիստներ, ինչպիսիք են՝ Սանտոսը Բրազիլիայում, կամ Ռոսարիոն՝ Արգենտինայում, ապա դա համաշխարհային առևտրում աղետի կհանգեցնի:

Ամփոփելով նշենք, որ առաջնային անհրաժեշտության ապրանքներ արտահանող երկրները պետք է անեն հնարավորը՝ լոգիստիկ խոչընդոտներին լուծում տալու համար, որպեսզի այդ ապրանքները երկրից երկիր տեղափոխվեն: Իրականում, ԿՌՎԻԴ-19 ճգնաժամն առկա խոչընդոտները բացահայտելու և հասցեագրելու հնարավորություն է: Մատակարարման շղթայում նյութատեխնիկական ապահովման բաղադրիչները պետք է պատշաճ ձևով ստուգվեն և հատուկ թույլտվություններ տրվեն՝ ապրանքները տեղափոխելու նպատակով: Նավահանգստի անձնակազմին պետք է առանցքային նշանակության կարգավիճակ տրվի, պետք է պատշաճ առողջապահական և անվտանգության միջոցառումներ իրականացվեն, այդ թվում՝ թեստավորում, պաշտպանիչ հանդերձանքի տրամադրում և սոցիալական հեռավորության պահպանում: Այս միջոցառումները միջազգային շուկաներում կայունություն կստեղծեն: Առաջին անհրաժեշտության ապրանքներ արտահանող երկրներում այս միջոցառումների ապահովման պատասխանատվությունը պետք է ստանձնեն բազմակողմ զարգացման բանկերը և հիմնական դոնոր կազմակերպությունները:

ԳՃԱՊԱՏԿԵՐ 1 | Առաջին անհրաժեշտության սննդամթերքի համաշխարհային պաշարները


Եգիպտացորեն



Ցորեն



Բրինձ



Սոյա



Աղբյուր՝ [Agricultural Market Information System](#)

Բարձր արժեք ունեցող ապրանքների մատակարարման շղթաներն ավելի բարդ են, ուստի երկրները պետք է հնարավորինս արագ գերակայություն շնորհեն այդ ոլորտին և ապահովեն միգրանտ աշխատողների մուտքը ֆերմաներ և գործարաններ: Երկրները պետք է արտադրությունը շարունակելու և աշխատակցին պաշտպանելու անհրաժեշտությունների միջև հավասարակշռություն ստեղծելու լավագույն ձևերը գտնեն:

4. Հասցեագրել առևտրի և հարկային քաղաքականությունները՝ համաշխարհային առտուրը բաց պահելու նպատակով

Ներմուծումներից կախված երկրները խոցելի վիճակում են հայտնվել՝ բեռնափոխադրումների հապաղումների և իրենց ազգային արժույթի նկատմամբ դուլարի անկման պատճառով, ինչը նվազեցրել է նրանց գնողունակությունը: Գրեթե բոլոր երկրներում պարենային ապրանքների գների աճ է ակնկալվում: Մեկուսացման պահանջի վերացման ընթացքում կարող են սննդամթերքի գների հանկարծակի և ծայրահեղ վայրիվերումներ տեղի ունենալ: Չինաստանում կառավարության կողմից սահմանված կարանտինից հետո սննդամթերքի գների շեշտակի աճ արձանագրվեց, ինչը խուճապային գնումների հետևանք էր: Իտալիայում այլուրի և պահածոյացված սննդամթերքի սուր պահանջարկի պատճառով թարմ ձկնամթերքի վաճառքի խնդիրներ առաջացան:

Երկրները պետք է անմիջապես սկսեն առևտրային և հարկային քաղաքականությունների տարբերակներ և դրանց հավանական ազդեցություններն ուսումնասիրել՝ պարենային ապրանքների առևտրի համար բարենպաստ պայմաններ ապահովելու համար: 2007-2008 թթ. պարենային ճգնաժամի ընթացքում շուկաների պայմանների (արտադրության, պահուստների, սպառման, առևտրի, գների) վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը և պետությունների կողմից քաղաքականությունների չհամակարգված միջամտությունները խափանումների և պարենային ապրանքների գների շեշտակի աճի պատճառ դարձան: Այսօր պետությունների տրամադրության տակ է Գյուդատնտեսական շուկայի տեղեկատվական համակարգը (AMIS), որտեղ ներկայացվում է հիմնական հացահատիկային մշակաբույսերի պաշարների և գների մասին թարմացված տեղեկություններ: Պետությունների միջև համագործակցությունը կարող է օգնել կանխելու [«beggar-thy-neighbor \(հարևան երկրների հաշվին\)» քաղաքականությունները](#), որոնք կիրառվում էին 2007-2008 թվականներին: Խոշոր երկրներն ավելացրել էին արտահանման հարկերը և արտահանման սահմանափակումներ սահմանել, ինչն ավելի վատթարացրեց ոչ միայն փոքր առևտրային գործընկերների, այլ մնացած երկրների վիճակը: Գների կտրուկ աճն անհամաչափորեն խորացնում է աղքատների խնդիրներն ամենուրեք, բացասաբար ազդում երկարաժամկետ մարդկային զարգացման և տնտեսական արտադրողականության վրա:

Սննդամթերքի համաշխարհային առևտրի ուղիները բաց պահելն առանցքային նշանակություն ունի պարենային շուկաների աշխատանքի համար: Կառավարությունները պետք է վերացնեն արտահանման սահմանափակումները, այդ թվում՝ արգելքը: 2007-2008 թթ. պարենային ճգնաժամից քաղած դասերը սովորեցնում են, թե ինչպես պետք է կառավարություններն արձագանքեն: Եթե մեկ երկիր սկսի դա անել, մնացած բոլոր երկրները կհետևեն նրա օրինակին, ինչը կործանարար կլինի շուկաների համար: Հարկավոր է վերացնել ներմուծումների վնասաբեր սակագները և առևտրի ոչ-սակագնային խոչընդոտները: Ներմուծման ցածր սակագները դյուրացնում են ներմուծումները և, այդպիսով, օգնում լուծելու պարենային ապրանքների պակասով և գների աճով պայմանավորված խնդիրները: Երկրները պետք է նաև ժամանակավորապես նվազեցնեն ավելացված արժեքի և այլ հարկերը՝ պարենային համաշխարհային շուկաների կայունացմանն աջակցելու նպատակով:

5. Մակրոտնտեսական հետևանքների կառավարում

Համավարակի պատճառով Չինաստանի արտադրության և սպասարկման ոլորտի գործունեությունը կտրուկ նվազել է: Խափանումները կրճատել են արտադրությունը և մատակարարման տատանումներ առաջացրել: Չինաստանն առանձին բաղադրիչների ամենամեծ արտադրողն է աշխարհում, իսկ փակ չինական գործարանները նշանակում են, որ ցանկացած իր ստեղծելու դժվարություն կառաջանա՝ սկսած բջջային հեռախոսից մինչև ավտոմեքենա: Պահանջարկի առումով, ևս, առկա են ցնցումներ: 2008 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամն ակնառու կերպով ցույց տվեց, թե ինչպես կարող են եկամուտների կրճատումն ու անորոշությունը տնտեսական անկման հանգեցնել:

Բազմաթիվ տնտեսություններ արդեն անկման փուլում են՝ կորոնավիրուսի տարածումը կանխելու դեմ պայքարի միջոցառումների պատճառով: Սակայն տնտեսությունը վերականգնելուց առաջ պետք է նախ համավարակը վերահսկողության տակ առնել: Իրականում, պետությունները պետք է համավարակի ազդեցության չեզոքացման և իրենց քաղաքացիների կյանքերի պաշտպանության համար ավելի մեծ տնտեսական ծախսեր կրելու պատրաստ լինեն:

Առողջապահական և տնտեսական ճգնաժամերի դեմ պետական մեծածավալ ծախսումների միջոցով պայքարին զուգահեռ երկրները պետք է նաև գնաճը զսպեն, մասնավորապես՝ պարենային ապրանքների գների ուռճացված աճի վտանգը նվազեցնելու համար: Կառավարությունները պետք է գնահատեն իրենց աջակցության և տնտեսական հետևանքների չեզոքացման փաթեթների ազդեցությունը վճարումների հաշվեկշռի վրա և ապահովեն պակասուրդից զերծ մնալը: Ընդամենը, նրանք պետք է նաև արտարժույթի պահուստների պատշաճ մակարդակ ապահովեն: Պարենային ապրանքների գների թռիչքի դեպքում երկրները պետք է համապատասխան արձագանքի նպատակով հանգամանորեն գնահատեն դրամավարկային/ֆիսկալ միջոցառումները:

Համավարակը կարող է ավելի մեծ բեռ ստեղծել աղքատ, ինչպես նաև արդեն իսկ պարենային ճգնաժամում գտնվող երկրների համար: Նրանք միջազգային ֆինանսական աջակցության կարիք ունեն, որպեսզի կարողանան առանց ավելի մեծ պարտքեր կուտակելու անհրաժեշտության հավելյալ սննդամթերք ներմուծել:

Աշխարհը, միանշանակ, պատրաստ չէր այս համավարակին: Սակայն մատակարարման շղթաների դարձանիվները շարժման մեջ պահելով և առևտուրը բաց պահելու նպատակով միջազգային համագործակցության ակտիվացմամբ պետությունները կարող են կանխարգելել պարենի պակասը և պաշտպանել առավել խոցելի բնակչությանը: